



**ՐԱԺՆԵԳԻՆ**  
 Մ. ՆԱԶԱՆԳՈՑ ՀԱՄԱՐ  
 Տարեկան \$ 1.50  
 Վեցամսեայ 0.85  
 ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՄԱՐ  
 Տարեկան 10 Թրանք  
 ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐՆԵՐ

Խմբագրութեան ղրկուած նամակ կամ ծրար ետ չեն վերադարձուիր:  
 ԳԻՆ 3 ՍԷՆԹ.



# Հայրենեաց



**ՀԱՄԱՐ**  
**ՈՒՅԵՆՈՒՄ**  
 AN ARMENIAN WEEKLY.

ՀԱՍՑԷ  
 AMERICAN HAI PUBLISHING CO.  
 209E. 23dSt., New York City.

Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter  
 Subscription \$1.50 a Year.

ՇԱՐԱԲ-ԱԹԵՐԻՔ

## ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հերիք Սարուինք. — Նամակ Թրանսպանի. — Հայկազեան Կառնոնի Հանգչար. — Սուշաձայի Հայաց Կենտրոն. — Ազգային Քրոնիկ. — Կոչ ուղղուած Ամերիկայի Հայ Կանանց. — Հանգչարի Ուէնթ Հոգեբեր. — Քաղաքական. — Ներքին Լուրեր. — Բանասիրական (Ոսկան Նազարեան):

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մեր բարձր գործակալներն, բաժանորդներն, ծանուցումի արձեքը ղրկողներն կը խնդրուի որ դրամ պարունակող ու դրամ վերաբերեալ ամեն նամակ ղրկեն առ՝

M. S. Sourenian  
 343 F. 34th St. New York City

### ՀԻՐԻՔ ԽԱՐՈՒԹԻՒՆ

250 հոգի ալ կոտորուեցան:

Հայաստանի արևելք չի դադարի: Սարուինքի վայրագութեանց վայրը դարձեալ վատագոյնացան է, հոն, ուր հայուն տագնապակից թշուառութեան էն սրտամաշուկ պատկերը կը ներկայացնէ: Ազգային (Հէքարի) մարդակալ դաշտն է արեան մէջ լողացող, հոն, ուր պարտաւոր սպանուած Շարիքը աններող բարբարոս վրիժով մը Հայ շինականների գրուներուէն կեն կը խոսոյ:

Երէկ Ալազկերտ կոտորած, ու այսօր վատագոյնացան. ու կոտորածներու վըշտէնքարացած ժողովուրդը, արևելներու ծովէն բարձրացած նոր հառաչանքները կը լսէ սառնութեամբ: Հարիւր հազար Ամերիկայի կորսնցողները, ալ հարիւրներ մեծ կորուստ չեն երեւար վեց: Բայց ալ աւելին կայ: Հայ ժողովուրդը կը ջարդուի, կը սպանուի, գերեզմանին կը մօտենայ, ու անդին կրկնուած ազգասպան աղաղակը դարձեալ կը բարձրանայ... Յաղթութիւն, Յաղթեցնե՛ք...:

Երէկ երբ Ալազկերտի մէջ 150 հայեր կը կոտորուէին, գտնուեցան մարդիկ, հայեր, որոնք «ոգևորութիւն» հռչակեցին, մեր Ֆէդայիները յաղթանակ տարած են յայտարարեցին: Իրականութիւնը: Խուճար մը զինուած հայեր կողմասէն Ալազկերտ կը մտնեն, քանի մը թուրք կը սպաննուին և փոխարէն 150 խեղճ հայ գիւղացի եր կը արդուին: Ահա՛ այն Իրողութիւնը, որ ոգևորած է ոմանք, եթէ այդ «ոգևորութիւն»ը կեղծ ու պատիր չէ թագուէն նպատակներով գործածուած: Անդին ու ասորին ալ կը պոռան՝ Հայ Ֆէդային լեռնէն ալ վար չը պիտի իջնէ...: Հայ ժողովուրդը իր ձեռք տըրուած գէնքը ալ վար դնելու չէ: Ո՛ր

են, ո՛ր այդ երեւակայական Ֆէդայիները, ո՛ր լեռներ կը գտնուին, ո՛ր կէ վար չը պիտի իջնան, ո՛ր, այդ այնպիսի գաղտնիք մըն է, որ ընտ գոյութիւն չունի: Իսկ ե՛րբ հայ ժողովուրդի ձեռք գէնք արուեցաւ, որ այսօր կը հրաւիրուի զէնքը վար չընել: Չէ՞ որ այդ ժողովուրդի արիւն քրտինքի լուծանքն է գոյացած հազարաւոր տղարները տակառ փորեր պարարտացուցին, իսկ գէնքերը խաչագողներու ձեռքով ծախուեցան, ու միթէ՞ միայն հրապարակի վրայ գիտցուածներն են, որչա՛ք քստմնելի գեղձուներ կան, որոնք գեռ վարագոյրի ետև կը մնան...:

Կը գործեն, կարչաւեն, գէնք վար չեն դնել ու միշտ ալ կը յաղթեն, բայց գոթազգարար միշտ ալ Հայ ժողովուրդն է որ կը ջարդուի, Հայ ազգն է որ պարիւնաքամ կըլլայ: Տասն տարիներէ ի վեր միևնոյն տուամն է որ կը կրկնուի: Օրը օրին դառն փոշու յաշորդեցին, բայց կարծես թէ գեռ հայ ժողովուրդը անգիտակից է իր վիճակին: Կամ այն է գրամբողջ ազգը անարարք է դէպի իւր գառն կացութիւնը և լոկ անզգայ հանդիսատես է ազգին բազդին կեն խաչցողներու ոտիւն, այսի՛քն կը հասկնայ: գիտէ, ու կը լռէ, և կամ այն է որ մեր ժողովուրդը շարունակ խաբուել կը սիրէ, կը քաջաբեւէ ու իր ծոցին մէջ կը սնուցանէ պոռոտախօսութիւն ու խաբբայութիւն: Ու վերջին կարծիքը միթէ՞ կուտէ է ճշմարտութենէ. քրքրներ մեր յեղափոխական ու օրուան կեանքը, քստնի՛ք քանի՛ տխուր իրականութիւններ կուգան ու հայ ժողովուրդի սխալանայ ապացոյց կը կանգնին:

Ճշմարտ ու անկեղծ հայրենասէրները կը հալածուին, կ'անպատուին, բայց որչա՛ք որ կուզէ թող փշէ պրակներ հրսան անոնց համար, եթէ ժողովուրդի զղջումն ու յարգանքը անոնց դիակին չմօտենայ, անոնց կորուսած շիրմները պիտի փնտռէ ու գտնէ: Իսկ անդին՝ պոռոտախօսները, խաբբաները կը բարձրանան, և ընտ չի արդարանար ժողովուրդը, երբ երէկի ծափով բարձրացած խաբբան անգունը կ'իջնէ ու անոր տեղ ուրիշները կը բարձրացնէ:

Պիտի տուժենք, պիտի կորսնցունենք, քանի մեր ժողովուրդը չի սովորած փրական երեւակայականէն զանազանել, ագնիւն՝ անազնիւն: Մինչև ե՛րբ...:

Ալ Հերիք Սարուինք...  
 Վ. ՇԱՀԷՆԻ

Ամերիկայի Հայ Հրատարակչական Ընկերութեան Հետ յարաբերելու ուղղորդումը կամ անդամակցելու ցանկացողները դիմելու են Վարչութեան Ատենապետին, Հետևեալ Հասցեով:

ARMENIAN PUBLISHING CO. OF U.S.A.  
 P. O. B. 1035,  
 Providence, R. I.



### ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

#### ՆԱՄԱԿ ԾՐԱՆՍԱՅԻՆ

Նանսի, դեկտ. 11.  
 Դեկտեմբերի 8 ուրբաթ երեկոյ Նանսիում, տեղւոյս Աշխարհագրական Ընկերութեան հրաւիրանքով՝ Սարուինքի գահ-լիճի մէջ տեղի ունեցաւ Պ. Ար. Զօպանեանի շահեկան բանախօսութիւնը:

Դահլիճը լիցուած էր երկուսու ընտիր հասարակութեամբ ամեն դասակարգից, որոց մէջ նաև բարձրատիճան քրօֆէսորներ և զինուորական պաշտօնեաներ:

Պ. Զօպանեան որ իրա «Անահիտ»ի հրատարակութիւնից դուրս, մեր ազգն ու հայրենիքը, նրա ներկան և անցեալը Եւրոպային և մասնաւորապէս Թրանսպանի ճանչցնելու օգտակար և գովելի նըպատակին համար իրա բազմաթիւ հրատարակութիւններով, աշխատութիւններով և զանազան Փրանսական ծանօթ թերթերի և հանդէսների աշխատակցութիւններով յայտնի է, այս անգամ էլ եկել էր Բարիզից, միևնոյն նիւթին նուիրուած գեղեցիկ, իմաստասիրուած և իրան յատուկ ոգևորուած և ջըզուտ բանախօսութիւնով անձամբ ծանօթացուեցու մեր տարաբազդ աշխարհ, նրա պատմութիւն, նրա բազմաշարքար և հալածական որդիների կեանքն ու կացութիւնը Թրանսպանի ժողովուրդին, նրա ընտրելագոյն ներկայացուցիչներին, հրաւիրելով միանգամայն և նրանց համակրութիւնը ու աջակցութիւնը ի նպատակ Հայկական դատին:

Համառօտ կերպով մը նկարագրելուց յետ Հայոց Հին պատմութիւն, Հայկի գիւցազնական ընթացքը, որ բռնակալութեան անարգ լուծին գլուխ խոնարհել չի ուզելուն համար առաջինն եղաւ զայն արհամարհող և հեռանալով Բէլից իրա փոքրաթիւ բայց ազատութեան գաղափարով տոգորուած խմբակով յաղթեց նրան և Հիմնեց Հայ ազգն ու նրա իշխանութիւն: Յիշեց Տիգրանների բարոյական ու քաղաքական նպատաւոր ազգեցեղութիւններ, Վառաձկնաբեր միջամը-

տութիւն և օժանդակութիւն Հայ գեղեցիկ գիւտի և Հայ գրական ոսկեղարի սկզբնաւորութեան մէջ, վարդանանց գաղափարական նահապետութիւն, վազան Մամիկոնեանի խելացի ընթացք, Ռուբինեանների կրթիկայում հաստատուելու Ռաշակիրների օգնութիւններ և Լևոն Զ. ի Եւրոպայում ընդունայն գեղեցեղանիքից վերջ Բարիզի մէջ ցաւալի մահը ևն:

Ապա և բացարեւեց Հայերի կատարած քաղաքական և քաղաքակրթական կրկնակ դերը անցեալում Հայաստանի նման ամենուստ բարբարոսների ճանապարհի վրայ եղող դիքի մը մէջ, յիշեց Հայերի ինքն ինքն քաղաքական անցեալը բայց սակայն նրանց տոկուն ընաւորութիւն, խորին հայրենասիրութիւն և յառաջդիմութեան ընդունակ տրամադրութիւնն, որով չի նայած դարերէ ի վեր անընդհատ հալածանքներին, չարաչար աղէտներին և անօրինակ տառապանքներին՝ կարողացել են պահել իրանց ինքնուրոյնութիւն և ցուցնել միշտ իրանց հոգիին կորովն ու բարձրութիւն, զատ ազգութիւնով, անկախ եկեղեցիով, մըշակուած լեզուով մը ու գրականութեամբ և այն օգտակար և յատազգի մական դերով իսկ որ նրանք կատարուած են նոյնիսկ ի նպատակ դիքի գերիների պէս շարչարող տէրերին... և որ դեռ կոչուած են Ասիայի մէջ քաղաքակրթական ընդարձակ ու կարեւոր ծառայութիւններ մատուցանելու մարդկութեան, եթէ երբէք այդ մարդկութիւն կոչուածը բարեհաճի և խիղճ ունենայ նրանց զոթազգ կացութիւն ուշադրութեան առնելու:

Այդ առթիւ յիշեց Եւրոպայի և գլոխաւորաբար Անգլիայի մեղապարտ անտարբերութիւն և դատաւրութիւն Հայկական խնդրին նկատմամբ, որ իրա ստանձնելով Այ-Սթէվանոսի դաշնագրով որոշուած Հայաստանի բարենորոգումներին հոգը ճիշդ աղետալի յօդուածով, ոյժ ու քաջութիւն տուեց Թուրք կառավարութեան՝ անխաբան յառաջ տանելու իրա հայաշինք քաղաքականութիւն Որոց իբր հետեւանք՝ նկարագրելով Հայկական ծանօթ աղետալի կոտորածներ, շեշտեց և մասնաւորապէս այն յայտնի հանգա-

մանքի վրայ՝ թէ ինչպէս այդ աղէկարար անցքերը Ֆրանսացիներէ զգայուն սրտերից եւ մտքերից ծածկելու համար՝ ժամանակի արտաքին գործերի նախարար Հաննօթօն ամենէն ամօթալի եղանակներով, չի նայած Պոլսոյ դեսպան Գանպոնի ազդու միջամտութիւններին, ջանաց աղետալի քաղաքականութեամբ սքողել սրտանմալի իրողութիւններ, իհարկին եւ թուրքերին արդարացնելու համար՝ ուրանալով եղածները. քաղաքականութիւն մը, որ իրա անսիրտ ընթացքով հարիւր հազարաւոր անմեղներէ արեան բողոք եւ խուլ հառաչանքներ խեղդելուց զատ՝ եւ այնքա՛ն ֆրանսական շարժում Արևելքում Ֆրանսական զարեւոր ազգայնութեան համար եւ պատճառ ու տեղի տեց որ Գանպոնիան աւելի արագ ու հաստատուն հաստատուի հոն՝ թուրքերու միջամտական ազդեցութեան բեկորներէ վրայ... Վերջապէս, մազթեց որ նորոգ քաղաքականութիւն մը, յարմար Ֆրանսական ազնիւ եւ մարդասէր զգացումներին՝ կարենայ դարձնել անցեալին այս կրկին սխալներ, իրանց ծանր հետեանքներով միտային:

Բանխօսութիւն քանիցս ընդհատեցաւ բուն ծախսարարութիւններով, եւ վերջացաւ ներկայ ժողովրդեան ոգևորումով, զգածուած համակրելի տպաւորութիւններէ տակ:

Ս—Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱԶՄՈՒԻ ՀԱՆՆԵՍՐ

Անցեալ շաբաթ երեկոյ տեղի ունեցաւ Նիւ Եորքի Հայկազեան Կաճառի հանդէսը:

Ժամը Տիւն արդէ հանդիսականները իրենց աթոռները գրաւած էին եւ անհամբեր հանդիսի բացման կըստակէին, սակայն բաւական ժամանակ հարկադրուած էին սպասել, որովհետեւ Պատուակալ Նախագահ Տօք. Արշակունի տակաւին չէր եկած:

Այդ սպասումը կէս ժամէն աւելի տևեց, երբ վերջապէս հանդէսը բացուեցաւ Տիար Հ. Մարկոսեան ի նախագահութեամբ:

Բայց արդէ մը վերջ Օրի. րդ. Եշիբեան Նախագահականի Աղաւթնաձայն «Երբէք անգլիներէն արտասանեց թէ եւ յստակ առողջանութեամբ, սակայն շատ կամաց ձայնով:

Տիկին Չիբեան, որու անունը յայտագրի մ' շ ղ դուռն էր «Մի՞ ծեռ ակ' երգը երգելու, իր սրամազրութեան թողուած ըլլալով, այդ իրիկուն արամադրութիւնը ինչպէս կերելի Bad Friday-ի հանդիսած էր, հետևաբար հանդիսանաները զրկուեցան իր ձայնը լսելէ:

ՓոստիկարՓը, Մեծ ՓոստիկարՓը ձերբառով զանա յոգնութիւնը յանձն չէր առած, ինչպէս կերելի ան ալ այնքան տըրամադրութիւն չուէր եղեր խօսելու:

Վերջապէս վարագործը բացուեցաւ. Հայ զօրք բու փոքրիկ վաշտ մը իրենց

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՈՍԿԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ (ԵՂԻՍԱՅԱՐ ՈՍԿԱՆԵԱՆ)

Ալէքսանդրիա, 25 Հոկտ.

Տառապալից երկար հիւանդութենէ մը վերջ, քաղաքիս մի յետընկած թաղի անշուք անեկի մը անկիւնը, երէկ իւր հոգին աւանդեց մի հայրենանուէր երիտասարդ, Ոսկան Նազար, ի խոր վիշտ համակելով իւր ընկերները, զինք յարգող ազնիւ հայրենակիցներն ու բարեկամներ: Ոչ եւս է նա, մեռաւ, եւ իւր վիթխարի հասակը, որի մէջ ասպետական վեհ սիրտ մը կը փոփայտէր, գերեզմանի անյայտ անդունդը ծածկեց յաւիտեանս: Օտար երկնի տակ, օտար հողի մէջ հայրենի կաթով սնած վասպուրականի ծաղիկը՝ խորհակազար թառամեցաւ տարածամ:

Այսօր մեծ շքով կատարուեցաւ իւր յուղարկուելու արարողութեան հանդէսը: Մարդիկ՝ որոնք իր կենդանութեան Պըղատական համակրութիւն մը կամ նոյն իսկ հակակրութիւն ունէին սոսկ յիշատակն օրհնելու համար եկած խոնած

ցած վրաններով անասուի մը մէջ բանակ դրած էր: Ձէնքերնին սրբել՝ մաքրել, իրարու բառեց. ոյց տալ, երբեմն կըբառնան ինչպէս, կրակին հետ խաղալ, մահուան հետ դէմ առ դէմ գալ ու իր իսկական զինուոր՝ օրուան գործովը ըզբողիլ հանդարտ ու խաղաղ առանց աչմուկի: Ահա ինչ որ զինուոր կընէ բանակին մէջ:

Մին առանձնացած նամակ կը գրէր, խօսակցութիւն մը սկսաւ ասոր ու ուրիշ զինուորի մը միջև. եւ սակայն բնական ըլլայէ շատ հեռի էր: Ան զինուորականի փութիկոտ, կատակասէր, զգարեցող ու շարժափող խօսքերէն ու շարժումներէն աւելի արեւելեան դանդաղ ու միօրինակ առողջանութեամբ ճառարտութեան նման բան մը սկսաւ, որ իր մէջ զինուորի մը արտասանութենէն զատ ամեն բան ունէր: Միօրինակ ու երկար շեշտեր, ձայնի տարօրինակ միակերպութիւն, որ եկեղձացու բեմէն տրոցունեցող գիրք կարգաւ կը յիշեցնէր, վերջապէս արուեստական:

Այս խօսակցութեան յաջորդեց ուրիշ զինուորի մը խօսակցութիւնը, որ երթալով աւելի ձանձրացուցիչ դարձաւ: Կարծես խօսողները զրուցատրութենէ մը աւելի տեսակ մը ողբ կարտասանէին: Ձը գիտեմ թէ Հայը ե՛րբ պիտի ազատ իր ժառանգական ողբասացութենէն: Կարծես մեր միտն ու սիրտը ողբով շաղուած ըլլայ. խօսիլ չը գիտենք, այլ ողբալ...

Գիշերը վրայ հասաւ, վաշտի իրաքանչիւր անհատը իր վրանը քաղուեցաւ, լուսնիւնը տիրեց ու գիշերապահներու ոտքի ձայները միայն կը լսուէին: Ձինուորի խօսքները չը լսուեցան, որովհետեւ հայերը՝ ինչպէս կերելի՝ չեն խօսար:

Յանկարծ պատերազմի փողն հնչեց, մեր վաշտը կայծակի արագութեամբ դուրս թռաւ ու թող մը շանցան՝ արձաւ: Գրեցն պատերազմի մէջ էին. յատուպապ վերջապահ կրակելով կը յառաջանային, վիրաւոր ու մեռելաները իրար վրայ կիշնային: Թշնամի փոխած էր, սիրտը պարտականութիւն մը կար կատարելիք, մեռածներն հաւաքել՝ ու հաւաքեցին, Հայ հանդիսականները կը խնդային, կարծես ծողրակալի մը հանդէպ գտնուէին: Մէկէն՝ զինուոր մը արևմտալեզուներն ենք վազեց. Սպանիական զրօշակը յափշտակելու յաջողած էր, յաղթութեան մը յատկանիշը կազմող ամենէն նշանակելի կէտերէն մին, սակայն զինուորը վիրաւորուած էր, ու զրօշակը իր կանգի գնովը գնած...:

Ամենէն կենդանի եւ խորհրդաւոր տեսարաններէն մին էր այդ, որ երբէք Հայկական Կաճառը մտածած էր, սակայն սպիտակ քարի կայանները գերասան չէին:

Վարագործը իջաւ եւ զինուորական մարզանքէ առաջ՝ Օրիորդ Մարտիան ուղերձ մ'արտասանեց առ Հայ զինուորս: Այդ ուղերձը Կրտսեր աւելի ազդեցիկ

էին իւր դազաղի շուրջը: Բազմութիւնը մեծ էր եւ արտաքին հանդէսը յուսացուածէն շատ աւելի շքեղ: Թարմ եւ արուեստական ծաղիկներէ երեք փառաւոր պըտակներ նուիրուած էին հանգուցեալի յիշատակին, հետեւեալ վերտառութիւններով:

- Ա. ք. — Ոսկան Նազարի յիշատակին: Ձինք յարգողներ կողմէն:
Բ. ք. — Եղիսայար Ոսկերչեանի Յիշատակին:
Գ. ք. — Անձնուէր Յեղափոխականի Յիշատակին:

Աղեքսանդրիոյ համակրներէն: Եպիսկոպոսն ու վարդապետները ներկայ էին: Սրբապանը կարճ դամբանականով մը ցուցուց հանգուցեալ երիտասարդի եւ մեծամարտիկ հարուստների միջև եղած տարբերութիւնը ու իր նշանակութիւնը, որի դաքաղի շուրջ բոլորած էին յիշուելի ընտանաւորութիւն մը ու բազմութիւն մը: Դազարը եկեղեցիէն դուրս բերելով, նախ եկեղեցական թափոքով եւ ապա սուանձին վարդապետի երիտասարդի պատկերն առնուեցաւ, անկէ յետոյ դաքարը ձեռներ զրայ, պը-

ըլլալ եթէ քիչ մը թոյլ չըլլար շարաշարութիւնը: Աւելի բանասեր զուգործեան նախնական ձեւեր կային ք ի պատերազմի գնացող զինուորներու ուղղուած կըստուակ, ցնցող ու բարբոթող խօսքեր: Կինը սրտով կը խօսի այսպիսի պարագաներու տակ, եւ սիրտը կը լացցնէ, կը յուզէ: Հոս երեւակայութիւնը կը խօսէր, որ աւելի մտքի յափշտակութիւն կը պատճառէ եթէ իր մէջ արուեստական ձեւեր չունենայ:

Մարզանքը սկսաւ: Հայ զինուորը հոս պէտք էր իր ընդունակութեան առանձնայատկութիւնները ցոյց տար: (Շարունակելի) Գ.

ՍՈՒՉԱՄԱՅԻ ՀԱՅՈՑ «ԱՆԻ» ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Սուշապայի (Աւստրիա) հայութիւնը, որ ամենահին գաղութ մըն է, Հեհաստանի Հայոց նման՝ դժբաղդար կորստելու վտանգին մէջ կը գտնուի: Հուն 1885ին Հիմնուած «Անի» ընկերութիւնը նշանաւոր ծառայութիւն կը մատուցանէր, սակայն այդ օգտակար հաստատութիւն ալ քանի մը տարիներէ ի վեր դատապարտուած էր լուծման ատարձանի անգործութեան ու քայքայման, այժմ շնորհիւ Արսէն վրդ. Վեհուկի եռանդուն ջանքերի կրկին ստպարէզ կիջնայ: Մեր տեղոյն թղթակիցը մեզ զրկած է ընկերութեան վերահաստատման հրաւերի պատճէն մը, որմէ կը քաղենք հետեւեալը:

«Այն տեսակ ժամանակ մը երբ ամեն մէկ ազգի անդամները իրենց ազգութեան ինքնուրոյնութիւնը միացած ու ժողպահելու եւ իրենց ազգի սեպական գրօշակը ու ժողովները ջանքեր կընեն, Պուգո-վինայի փոքրաթիւ հայերն ալ այդ ընդհանուր շարժումէն զուրկ չի մնալու համար 1885 թուականին ընկերութիւն մը հաստատած են Մար Հայրենիքի հին Անի մայրաքաղաքի անունով, որը կոչուած է ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու որոտն՝ մըլլալ Պուգովինայի Հայոց համար:

Երբ քանակաւ ազգեր այդ նպատակով կազմուած մարմինները ու ժողովները եւ իրենց մէջ աւելի սեղմ ընկերական կեանք հաստատելու համար ամեն ճիշդ կը թափեն, ցաւալի է որ մեր «Անի» ընկերութիւնը իր թմրութիւնով կը փայլի: Երբ ամեն կողմ ազգութեան, լեզուի ու ազգային սովորութեան պահպանութեան համար ոտք պայքար մը կը մղուի, մեր միակ ընկերական հաստատութիւնն եղող «Անի» ընկերութիւնը անգործութեան մասնուած է:

Տեղւոյս արդէն իսկ փոքրաթիւ հայերը իրենց մէջէն մի քանի կարևոր դէմքեր կորսնցնելու դժբաղդութիւնն ունենալով՝ մնացածները անհովիւ ոչխարներու Լօտի մը պէս շուրաւ իրենց ազգային առանձնայատկութիւնները կամայ կամայ կորսնցնելու վտանգի մը մէջ կը գտնուին:

Սակները ու եկեղեցական միեւնոյն թափոքը առաջին, սե լաթի չորս ծոպերէն չորս մարդիկ բռնած՝ հանդիսաւոր կերպով տարուեցաւ մինչև Անի իսկական պահականցը, ուրկէ մեռելակառքը դրուելով իւր վերջին հանգստարան՝ առաջնորդուեցաւ բազմութիւն կառքերով:

Գերեզմանատունը կրկին անգամ լուսանկարն առնուելով, իւր ընկերներն ու համակրները հրաժեշտով վերջին համբոյրով յաւիտեան կանաչ տարուեցան անհովիւ տանելով հողը իջեցուցին դաքարը, երբ իւր ամենամտիկ ընկերներէն Տ. Ասքանազ Մեղքոնեան, զգածուած, կենսազարկան համառօտ ծանօթութիւններով յանձին Ոսկան Նազարի եղած անդամներէն կորուստը ցուցուց, որմէ վերջ, իւր հայրենակիցներէն նորեկ երիտասարդ մը Տ. Մուշեղ Բաղչեան կարգաց դամբանական մը հանգուցեալ արժանիքը գրուատելով:

Ամեն բան վերջացած էր այլևս, գրակ մը վախիտ մը լուծուած՝ գերեզմանի անյատակ անդունդը կիջց. միայն զգածուած որտեք, խոր մտածմանց մէջ թաղուած, գերեզմանէն անդին, կեանքէն աւելի, անմահութիւն կը փնտռէին... Մարդիկ կան որ գերեզմանէն ասդին

Ի նկատի բնականով այս ամենը, ստիպողական պահանջը կը ներկայանայ ազգայնութեանց մէջ մղուած փոխադարձ վառ պայքարի ժամանակ՝ Հայ ազգութեան առանձնայատկութիւններն, լեզուն եւ անոնց մէջ ընկերական կեանքը, մէկ խօսքով, Հայ ազգի ինքնուրոյն գոյութիւնն ալ պահպանելու համար մի տեղ հաւաքել Պուգովինայի եւ շրջականերու մէջ գտնուող այն ամեն հայերը, որոնք ազգը իր այս աննախնայ վիճակէն ազատելու կարողութիւնն ու պարտաւորութիւնն ունին:

Պուգովինայի Հայերն իրենց ներկայ աննախնայ վիճակէն ազատելու համար ամենէն առաջ պէտք է մըլլալ քուր մէջ գտնուող «Անի» ընկերութիւնը վերակենդանացնել, որի ազնիւ նպատակն է՝ հայերուն մէջ ընկերական կեանք հաստատել եւ արժանաւոր ու շքաւոր սուսանդներուն օգնել:

Անի ընկերութեան վերածնութիւնն է որ պիտի կրնայ Պուգովինայի Հայերուն տալ իրենց նախնի նախնածնի գիրքը այս պատական երկրին մէջ, ուր ամեն մարդ կը վայելէ իրաւունքի հասարակութիւն եւ ազատութիւն:

Մայր Հայրենիքի մէջ բունաւոր իշխանութեան մը լուծին տակ, նօզնական տանջուող Հայրենակիցներու տխուր վիճակին վրայ անխաբէր բաւական է ըզգացնելու համար մեզ թէ ինչ տեսակ վիճ մը կայ բացուած Հայ ազգին առջև, որին մէջ գլխորդելով բոլորովին ոչնչանալու անխուսափելի վտանգին մէջ կը գտնուի Հայ ազգը, եթէ՛ Մայր Հայրենիքէն հեռու գտնուող Հայերն ալ իրենց ազգային ինքնուրոյնութիւնը պահպանելու մասին անհոգ գտնուին:»

Սոյն ընկերութիւնը ըստ իւր հրաւերին՝ ժողով պիտի ունենան դեկտ. 17ին: Հրաւերն ստորագրած են Սուշապայի նըշանաւոր ազգայիններէն վեց անձնաւորութիւններ:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Արմէնիայի մէջ կը կարգանք. Հայերի ճամբորդութեան համար կայսերական իրաւունքով հրամայուած թոյլատուցութիւնները նորէն սկսած են խրատութիւններ տեղի տալ, իբրև թէ վերջերս Սասունի կողմից պատահած դէպքն ալ իրենց խստութիւնները պատրուակ մը շինելով: Արդէն թուրքերի մէջ առած ի կարգ անցած է թէ թագաւորի արգելքի իրաւունք Յօր միայն կը տեսէ (Կրտսեր Նազար Նազարի իւր կրակն ալ անկէ աւելի չտեսէր. Թուրքերի մէջ օրհնները եւ իրատեսները շին որ կը տիրեն, այլ քամակաւորները:»

Լծոտնի Հայոց Նպատամատոյց ընկերութիւնը Ծնունդի առթիւ կաշխատի 5000 լիւրայի գումար մը գոյացնել, որուն

կապրին, մարդիկ ալ կան որ մեռնելէն վերջ կ'ամաճանան. մարդիկ կան որոնց վարած կեանքը մահուանէն վերջ իրենց գերեզմանի վրայ նախատեսաց եւ յաւիտեանական անէճքների իբրև հսկայ կրթող կը ցցուի, մարդիկն ալ կան որոնք իրենց ժամանակաւոր կեանքով՝ մետաղեայ եղծանելի արձաններէն աւելի անմահութեան յաւիտեանական անդրիններ կը բարձրացնեն: Ոսկան Նազար այս վերջիններէն էր, որի հայրենասիրութեան օրհնակելի կեանքն ու անձնուրոյնութիւնը սպառնալից իւր անմահութեան կրթողը պիտի բարձրացնեն:

Թէ ո՞վ էր Ոսկան Նազար, ճանչնալու համար, իւր բնույթն կեանքէն մի քանի գիծերը կարժէ մէջ բերել: Նղիւզար Ոսկերչեան (Ոսկան Նազար) ընկի վանքի, մի համառօտ ծնողաց համար մօր զաւակ էր, որի կրթութեան համար իրենց կարողութենէն աւելի զոհած էին իր ծնողք: Դեռ տասնուհինգամեայ պատանի, իւր շրջանն աւարտելով՝ երախտագէտ զգացումներով աննան վարձքով մը յանձնառու կը լինի միեւնոյն դըպրոցի մէջ ուսուցչութեան պաշտօն վարել տարիէ մը աւելի: Փոքրիկ Նղիւզար գեռ դպրոցական աշակերտ՝ կրողով յան-

3500 արդէն պատրաստ է և ուղարկել մէկ մասը Վան Տօթ. Բէյըլիսին, որբերու և սովորակներու համար, և մէկ մասն ալ Մարաշ Օր. Սամընտին, նոյն նըպատակին:

Ռուս կառավարութիւնը վեհ. կաթողիկոսին պահանջած է որ այսուհետև հայերը ուսուսական դատարաններու մէջ երգուին ուսուսընդ լեզուով, Հայրիկ մերժած է առարկելով թէ՛ Հայոց աղօթքի լեզուն հայերէն է:

Քահանայ մը որ հրաւիրուած է եղբոր դատարան մէջը երգուցնելու, մերժած է ուսուսընդ լեզուով կատարել երգում, ըսելով թէ կաթողիկոսին հրաման ստացած չէ:

Վեհափառ կաթողիկոսը 456 կտոր եկեղեցական մատենաներ դրկած է Պատրիարքարան՝ գաւառներու կարօտ եկեղեցիներուն դրկելու համար:

Մինչ երուսաղէտի Պատրիարք սակարկութեան մասով էր այդ գրքերէն քիչ մը աւելի գին առնելու համար, Հայոց Հայրիկ իր նուէրով կը փութայ յիշել իր սիրած գաւառները:

Կ Ո Ձ

ՈՒՂՈՒՍՄ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ

Բաղդակից քոյրերս,

Օրէ որ Հայրենիքէն հասնող աղեկը տուր լուրեր հաղարու որ ծնողազուրկ, անաէր ու անտիրական որբերու թշուառ կայսթիւնը կը թխաբերեն զի ուղղել զայս կոչը՝ ինձ բաղդակից Ամերիկայի Հայ կանանց:

Քոյրերս, իբր հայ կին, գիտեմ ձեր սրտերն ալ կը կսկծան մայրերուն յատուկ կսկծանքով այն խնդճերուն վրայ, որք որ և արև չեն տեսներ և ծնողական խնամքն ու գորգորանք չեն վայելեր, այժմ սփռուած կան Մայր Հայրենիքի ամեն անկիւն՝ անօթի ու մերկ գունէ իրգուս կը մտրան բրդով մը հաց:

Սակայն աւա՛ղ զայն ալ իրենց տուող չկայ:

Ազգային այս անպակաս աղէտին առջև լռել ու անարարել մնալ դէպի ազգին որբերը՝ մեզ համար պատտաբեր չէ ցորձափ ունինք միջոց օգնութեան հասնելու այդ թշուառներուն, որք պիտի լինին ազգին ապագայ սերունդը՝ չի փափաքելով երկար նկարագրելու այս դառն կացութիւնը, որոյ մասնուած են այդ լքեալներ և որ աշխարհին ծանօթ է:

Կուգամ հրաւէր ուղղելու բոլոր հայ կանանց, որպէս զի շուտով, որչափ որ կարելի է, կազմեն հայ կանանց ձեռագործութեան մի ցուցահանգէս կամ բազար ի յայտատ որբերուն ամերիկացի ծանօթ կանանց խնամակալութեան ներքեւ, ուր հայ կինը կարող լինին իրենց ձեռքով ձեռք բերելու:

Պրոպագանդայի և անվերջութեան շատ մը ապացոյցներ տուած էր. ժամանակի սեփականութիւնն ու յեղափոխական հոսանքը, ազգային վէպերը անզգայաբար զինք Հայրենասիրական ցանցով բռնած էր. ոչ ապաքէն չէ լռելուստի մեր հաս մը լինելը իբր սեւեռու իտէալը դարձած էր: Իւր սիրտը հայրենասիրութեան բով մ'էր. որի հնոցը ապագային հրեղենոց կայծերը օրէ օր կը մխայիտ արծարծուին:

Ատաղձագործի մը աշակերտ եղաւ, ուր խորտո բնութեամբ ուրիշին ենթարկուելու ծանրութիւնը կը վշտացնէր զինքը, աւելի ազատ ասպարէզ մը չկար իր առջև...

Բուսական ժամանակ էր անցեր մինչև 90 թուական, «Մեծ Հայրենասէր»ի ցանած սերմերը իրենց զգալի արդիւնքն ունեցած էին, յեղափոխական ցանցը վասպուրականէն անդին տարածուած էր, գործերն ու փորձերը թուրք կառավարութիւնը կ'անհանգստացնէին, թէրգրիպաշխարհը նշան մը կառավարութեանէն կը ինքիքի Պոլսի երթալու իբր հաստատութիւն մը լինէր: 90 թուականի Մուսթաֆայի գահաձեռնումէն զետեւ: Կը հասնէր Պոլսի, վասպուրական յեղափոխութեան ման-

ուագործութիւններ ուղարկել ամեն կողմերէն՝ ցուցադրուելու ու վաճառուելու ինչպէս հայ որբերուն: Այսպէսով կատարած կը լինինք երկու գործ, մին՝ Ամերիկացուց կը ծանօթացնենք հայ կանանց գեղարուեստն ու ձեռագործութեան ճաշակը և երկրորդ՝ օգնած լինինք որբերուն այդ պազարէն գոյացած եկամուտներով:

Ձեռագործութեան այդ ցուցահանգէսին կամ պազարին կրնան և մասնակցել Ռուսաստանի, Պոլսի, Եգիպտոսի և բոլոր արտասահմանի հայ գաղութներ և այդ կը լինի ապագայի կազմութիւնը վարչութեան գործ:

Յանձնելով զայս կոչը Մամուլին՝ կըստանանք լսել հայ մարդու և հայ կընտը կարծիքներ, որպէս զի փութան ձեռք ձեռքի տուած՝ զայս կարեւոր գործ իրաւուն հանել, և ի մասնաւորի Պատանի Հայրենակիցներ, ուր կը գտնուին ծանօթ ամերիկացի տիկիններ, և թող այդ ինքի բրդուած մը հաց կրնանք զէպի այն թշուառներ, որք ծնողքի խնամքէն զուրկ են, որ ոչ ուսուցու հաց, ոչ հագնելու շապիկ և ոչ բուսիկ ուսերն ծածկելու արեւս ունին:

Հայաստանի որբեր հաց կը խնդրեն. եկէ՛ք, իբրև մայրեր՝ տանք անոնց հաց, և այդպիսով կատարենք մեր սրբազան պարտքը:

ՏԻԿԻՆ ԴՇՆՈՒՅԻ ՎԱՀԷ

ՀԱՆՆԷՍ Ի ՈՒՅՍԹ ԶՊՊՐԸՆ

Ամերիկայի Հայ անդրանիկ վարժարանի վեցամսեայ մրցանակաբաժնու թեան հանդէսը կատարուեցաւ Ռէսթ Հոյօքընի մէջ անցեալ կիրակի գիշերը: Աւարտուելէ քան անսով ստուար բազմութեան մը հանգիստավայրի խոնկով՝ հայրենի քաղաք յիշատակներով վերաբարձու մտով հրճուելը:

Ոչ այնքան հանդէսը, որքան այդ անդրանիկ դպրոցը և ոչ հայ մանկանի իրենց կատարելիքը ապագայ կարևոր գերբով զգայուն սրտերը կուրսացնէին ու կը յուսադրէին...

Մեծ էր հանգիստը նշանակութիւնը, ինչպէս և զովելի գայն քաղաքի զազգայիններէ արջնութիւնը: Դպրոցը լայն աղբիւրն է, ուր այդ փոքրիկ մանուկները ուսանելով ու դաստիարակուելով, պիտի լինին հայութեան ապագայ յոյսերը:

Ամերիկայի մէջ, ուր ամեն էն աւելի դիւրութեամբ և անզգայաբար կը ձուլուին ազգեր ու ժողովուրդներ, մեր գոյութիւնը պահպանելու համար, միակ և մի միակ միջոց ազգային դպրոց ունենալն է, ուր սոյն իր մայրենի լեզուն, կրօնն ու պատմութիւնն սովորելովն է որ պիտի կրնայ լափող հոսանքին դէմ իւր ինքնուրոյնութեան կռիւ մղել:

Ուրեմն այսպիսի հաստատութիւններ

ուպատու մտերեկազիր մը կը ներկայացնէր Սուլթանին, վեհափառ Հայրիկ, Տ. Մ. Փորթուգայան և Կերթոնականի բոլոր աշակերտները անխաբ կառավարութեան վաստակաւոր մարդիկ ցուցնելով: Վարձարուած վան կը վերադռնար իր ստացած պատիւներով քէ քէ ընելու, ապագայ ներանոր շարքերի սպանակիքներով...

Մի օր Եղիազար, այդ տաննօթամեայ պատանին, որի սիրտը դաւաճանի արիւնը խմելու վրէժխնդրութեամբ լեցուած էր վաղուց, տեսնելով որ նշան իր խոնկութի առջևէն անցնելով սուր կերթայ, անմիջապէս կը թողու իւր գործը և վեց հարուածեանն ու դառնին աւանդով մի ժամէն աւելի կը հետևի, մինչև որ կը հասնի յարժան արթիթը՝ օձիքէն բռնելով Երո՛ւ վատ դաւաճան, մինչև և ե՛րբ ապրիտ՝ ասելով դառնին երեք հարուածներով մասնիչը արեւաշաղախ գեպին կը փոէ աղբիւնը դուրս թափած, և ինք ահագին վտանգաւոր ճամբաներէ անվախ շարունակելով կազատուի բոլորովին գաղտնի և ծածուկ պահելով իրեն զիրքը: 90 թուականի վերջերս էր, երբ ռաջին անգամ յեղափոխական դառնը դաւաճանի կուրծք կը մըլէր Ոսկերչ-

րին, թշնամաքէ աւելի, քաղաքի թիւն և աղակցութիւն պէտք է շաղկապել: Կրօնական խորութիւնը պատճառ մը չէ արգելքներ յարուցանելու այդ դպրոցին դէմ, ուր կրօն սովորելէ առաջ Մայրենի լեզուն կուսանին: Միայն այն ստան կրօնական ազդեցութեան կ'ենթարկուին աշակերտները, երբ արդէն խնարհաս եղած են:

Բարի նախանձը և ազնիւ մրցումը միշտ յառաջդիմութեան խթաններ են. իսկ անոնք որ ազգային արժանապատուութեան դէմ և մինչև իսկ վտանգաւոր(?) կը համարեն այդ դպրոցը, թող ուրեմն բարեհաճին քսութենէ, պատահական բանքասանքէ և հայտուցներէ աւելի՛ բարոյական ու նրբական զոհողութեամբ, գործնականօրէն իրականներն իրենց բաղձանքը, որը Ամերիկայի գաղութը երախտագրութեն պիտի ծափէ ցնծաքին:

ՔՐԿԱՔԻԱԿԱՑ

Յրանսայի մէջ դէպի Անգլիա տեսլութիւնը այն աստիճանի հասած է, որ հետեւեալ տարօրինակ դէպքը պատահեց է, որուն զոհը դժբաղդարար հայ մըն է:

Փարիզի մէջ Պրզանտն անուն երեսասարդ մը սրճարանի առջև նստած՝ «Թրանսպալի Լուրերը» անուն թերթը կը կարդար: Երբ Անգլիական խժոճութիւնները կարգաւոր բարկութենէն ինքնիրմէ ելած էր, լսեց խեղճ հայու մը ձայնը, որ իզուր կաշխատէր իրեն թերթական լօգում ծախել, փաղաքուշ ձայնով մը անգլիներէն ըսելով «Թրզական աւելի տաքցաւ. եւ՛ իր կարծիքով իբր հարազատ գաւակ Յրանսայի՛ ինքզինքը անգլիներէն խօսող օտարականէ մը վերաբարձու զգալով՝ փոքրիկ հայուն ձեռքէն բռնեց, ցնցեց զայն և յետոյ իր գաւազանը անոր վրայ կտրեց:

Երբ թուրքական լօգում ծախողը իր ձեռքէն ազատեցին, զայն խախտաբար գտան և մէկ ձեռքն ալ կտրեց:

Խնդիրը դատարանի առջև ելաւ: Պրզանտն աշխատեցաւ ինքզինքը արդարացնել ըսելով թէ՛ ինք թերթ կը կարդար, երբ լսեց անգլիներէն «Թուրքական լօգում», երկուքը մէկ գէննի՛ր եւ ասիկա իրեն համար անտանելի էր, թէ և ինքը ոչ անգլիստէր և ոչ ալ անգլիստեաց:

Օ՛ր, բացառանչեց դատաւորը, ինչը բարձր պիտի ըլլայիք եթէ անգլիստեաց ըլլայիք:

Պրզանտն պատասխանեց. — ոտքիս տակ կաննէի, որովհետև Անգլիացի է:

— Բայց, ընդհատեց դատաւորը, նա բնաւ անգլիացիի չի նմանիր, թուի մորթ ունի:

— Իրաւունք աւելիք, պատասխանեց

եան, թէ ր օ ա կ ան գործողութեան հիմը դնելով Հայ ազգին մէջ:

Անցան և սահեցան երեք երկար տարիներ. կատարի Պահրի փաշան Ներոնական անգլոթեամբ վասպուրականի գեոափրիթ երկրասարդութիւն խանցելու և թորչումեցնելու ամեն ջանք ի գործ կը դնէր, մի այլ մասնիչ, Ջուպի Յակոբ, Մէր Գօլիսէր Նուրիի և Պահրի փաշայի կատարուելունը յազեցնելու ամենանարգ գործիքն դարձած, Գիւղերը քանդելու, մայրեր լացնելու և բանտի խորերը երեսասարդներ թիւր բազմապատկելու առիթները կը հայթայթէր: Ալ ևս բաժակը լցուած էր, վանք կամաց կամաց կամայանար իւր երիտասարդներէն, բանտի, աքսորանց, փախստականութեան և պանդխտութեան մէջ: 93 թուի գարնան էր, որ Եղիազար Ոսկերչեան դարձաւ կը վճռէր վերցնել կեանք մը անձնագոհութեամբ: Օրը ցեղակով բանուկ փողոցի մը մէջ Յակոբի թեւէն կը բռնէ կամացու մը Ալ հեղիք չէ՞ զո վատութիւնը ըսելով վեցհարուածեան ակնաղին կը դնէ, հրազէնն կորստայ և դաւաճանը գետին կը թաւալի արիւնաշաղախ: Վրիժառու ժպիտով մը քաջի մը կուտայ պիղծ բերնին, որ

պաշտպանեալը, սակայն մտածեցի թէ Հնդկաստանի մըն է և ուստի անգլիա-հրպատակ մը:

Դատաւորը զայն դատապարտեց 200 Ֆրանք տուգանքի և 700 Ֆրանք ալ վընաւոր փոխարինելու:

Անգլիական ձախողութիւնները հետըզհետէ սկսած են նոր նոր թշնամիներ հանել իր դէմ:

Հնդկաստանի մէջ խուլ շարժումներ կան: Հապէշիստանի Մէնէլիք թագաւորն ալ կուզէ նորէն արշաւանք գործել Ափրիկէի իտալական բաժնին վրայ: Անգլիա դաշնագրութեամբ մը կապուած է իտալիոյ և ստիպուած է անոր օգնել, երբ Հապէշիստանի կողմէն դժուարութիւններ յարուցուին իր դէմ:

Ասդին, կըսուի թէ Միացեալ Նահանգներու մէջ Յէնիքն կոչուած իրաւատացի յեղափոխականները կը պատրաստուին 125,000 հոգիէ բաղկացեալ բանակով մը Գանատա արշաւել:

Լուր կայ թէ Անգլիա և Գերմանիա միացած պիտի գրաւեն և իրենց մէջ բաժնեն Փորթուգալի Ափրիկեան գաղութականութիւնը: Անգլիան պիտի տիրանայ Տէլակուս նահանգստին: Եթէ այդ լուրը ստուգուի, Պօքրները այլ ևս պիտի չը կրնան դուրսէն ու է ուղիւ մը թերթը և պաշար ստանալ: Սակայն և այնպէս այդ պատկ ժողովուրդը իւր ամեն տեսակ պաշարները ժամանակին ամբարած է, և դժուար թէ՛ մտ ժամանակի մէջ ընկնուի:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Նիւ Եորք, 24 Դեկտ.

Տէր Խմբագիր «Ջայն Հայրենեացի», Հաճեցէք Ձեր ալգօգուտ թերթին մէջ հրատարակել սոյն երկտողը:

Քաղաքիս Հայ. Երի. Որբանամ Ընկերութիւնը ու թէր ամիսներէ իվեր առկա լինակ մէջ ձգուած է շնչին պատճառներով. ուստի այժմ կուգամ ծանուցանել որ այն անդամները, որոնք կը փափաքին սոյն բարենպաստ կողմին յառաջ երթալը՝ թող հաճին անձամբ կամ նամակաւ ինձ դիմել և իրենց գաղափարները յայտնել մինչև 1900 Յունվար ամսոյ վերջը. հակառակ պարագային՝ քովս գտնուած 35 տղարի չափ դըրամը պիտի ստիպուիմ կ. Պոլսոյ Պատրիարքարանը զրկել և հաշիւը փակել: Հայ. Երի. Որբ. Ընկ. Գանձապետ ՄՆԼՔՈՆ ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

Հասցէս է՝ 318 E. 34th St., New York City

Նիւ Եորքի Տիկնանց Որբախ. Ընկ. 1900 Յունվար 20ին շքեղ հանդէս մը պիտի տայ: Մանրամասնութիւնը յաղորդի:

այլևս յաւիտենապէս կը լռէր արժանաւոր վարձարութեամբ: Կնիկներէ բազմութիւն փողոց կը թափի սարսափահար, և ինք կը պոռայ Մայրի մի վախնաք, այլևս դադարեցան ձեր արտասուքները, միայն թէ եթէ կառավարութիւնն կուգայ՝ ասէք որ Ա. ք. Լ. ք. վ. արժ. ա. պ. ան է այս վատը սատկեցնող, մի վախնաք, իմ պատճառաւ ոչ ոք թող բռնեն, աւա ես կերթամ, կառավարութիւնն եթէ կուզէ թող իմ ետևէս գայ...»:

Ոսկերչեանի այս անգամ ապօրինական վեհանախագիտութիւնն աւելի վսեմ օրինակ մը տուաւ, բացէն ի բաց ինքզինքը սպաննիչ յայտարարելով, քանի որ եթէ ուղիք՝ նախորդի պէս կարող էր ծածուկուիլ: Քանի որ բարբարոս կառավարութիւնը անխնայ պիտի ձերբակալէր այդ փողոցի մէջ ապրող ինչպէս նաև կոսկականները և կամ բանտի սարսափեցուցիչ կեանքն նախընտրելով:

Այս ամեն՝ իւր յեղափոխական գործունէութեան և կեանքին յառաջաբան են տակաւին:

ՋԱԻՆ

(Շարունակելի)

